ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/328

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20922-2021 գրությամբ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 09.12.2021թ. թիվ 24/1-5/30638ել գրության հիման վրա, 20.12.2021թ. թիվ 26/26-1/20922-2021 գրությամբ նախաձեռնել է «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/328 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.12.2021թ. թիվ 24/1-5/30638ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում թեքահարթակների աշխատանքներ:

Ներքոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերությունով,

առաջարկում եմ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը, քանի որ.

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 153 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի ա) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի ենթակետի համաձայն՝ մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կապալառուն ժամանակին չի սկսում կապալի պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 21.10.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 04.11.2021թ. 24/1-8/27208ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/328 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2021/328 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/328 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջև 09.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, պայմանագրով նախատեսված աշխատանքերի կատարման համար սահմանվել է հետևյալ ժամկետը. «սկիզբ՝ պայմանագիրը օրենքով սահմանված ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ 153 օրացուցային օր»:

3. Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

4. Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտակ Համլետի Մարտիրոսյանի միջև 01.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/31» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների կողմից ներկայացված թեքահարթակների

կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

5. Պատվիրատուն «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ուղղված 04.11.2021թ. թիվ 24/1-8/27208ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջև 09.07.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով ընկերությունը պարտավորվել է կատարել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները»:

21.10.2021թ. հ. 24/1-8/25732ել գրությամբ առաջարկել ենք սեղմ ժամկետում սկսել վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները, սակայն առ այսօր աշխատանքները չեն սկսվել:

Առաջարկում են Ձեզ 5-օրյա ժամկետում սկսել թեքահարթակների կառուցման աշխատանքները»:

6. Պատվիրատուն «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ուղղված 02.12.2021թ. թիվ 24/1-5/30021ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում թեքահարթակների աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն

հավելված 2-ի՝ 153 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի ա) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի ենթակետի համաձայն՝ մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կապալառուն ժամանակին չի սկսում կապալի պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Նշված պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ ժամկետում իրականացնել թեքահարթակների կառուցման աշխատանքները, քանի որ եղանակային պայմաններն էլ գնալով վատթարանում են, սակայն կրկին որևէ աշխատանք չի իրականացվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 21.10.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 04.11.2021թ. 24/1-8/27208ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:(...)»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 08.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20922-2021 գրությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 09.12.2021թ. թիվ 24/1-5/30638ել գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ

մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջև 09.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, պայմանագրով նախատեսված աշխատանքերի կատարման համար սահմանվել է հետևյալ ժամկետը. «սկիզբ՝ պայմանագիրը օրենքով սահմանված ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ 153 օրացուցային օր»:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտակ Համլետի Մարտիրոսյանի միջև 01.07.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/31» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների կողմից ներկայացված թեքահարթակների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պատվիրատուն «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ուղղված 04.11.2021թ. թիվ 24/1-8/27208ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջև 09.07.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրով ընկերությունը պարտավորվել է կատարել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները»:

21.10.2021թ. հ. 24/1-8/25732ել գրությամբ առաջարկել ենք սեղմ ժամկետում սկսել վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները, սակայն առ այսօր աշխատանքները չեն սկսվել:

Առաջարկում են Ձեզ 5-օրյա ժամկետում սկսել թեքահարթակների կառուցման աշխատանքները»:

Պատվիրատուն «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ուղղված 02.12.2021թ. թիվ 24/1-5/30021ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ, ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում թեքահարթակների աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 153 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի ա) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ

աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի ենթակետի համաձայն՝ մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կապալառուն ժամանակին չի սկսում կապալի պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Նշված պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ

ժամկետում իրականացնել թեքահարթակների կառուցման աշխատանքները, քանի որ եղանակային պայմաններն էլ գնալով վատթարանում են, սակայն կրկին որևէ աշխատանք չի իրականացվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 21.10.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 04.11.2021թ. 24/1-8/27208ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:(...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 08.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1-րդ կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 09.07.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20922-2021 գրությամբ «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հակոբյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**